ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

Միջնադարի ականավոր դեմքերից մեկի՝ մատենագիր, կրթական ու եկեղեցական գործիչ Թովմա Մեծոփեցու (1378-1446) պատմագրական աշխատություններն են, որ գիտական հրատարակությամբ ընթերցողների սեփականությունն են դառնում: Թովմա Մեծոփեցին այն հեղինակներից է, որի երկերը լույս են սփռում ԺԴ-ԺԵ դդ. Հայաստանի և Միջին Արևելքի պատմության վրա: Այդ ժամանակաշրջանի ու տարածքի պատմության բազմաթիվ հարցեր ըստ ամենայնի բացահայտվում են Թովմա Մեծոփեցու հատկապես «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկի շնորհիվ: Հակառակ այս պարագային, սակայն, այդ և հեղինակի պատմագրական մյուս երկերը մնում են չհրատարակված և չուսումնասիրված: Բացառություն է կազմում Գարեգին Հովսեփյանի Վաղարշապատում 1914 թ. հրատարակած «Թովմա Մեծոփեցու կյանքը» գործը: Եվ ահա հանգուցյալ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի աշխատասիրությամբ «Մագաղաթ» հրատարակչությունը լույս է ընծայում «Թովմա Մեծոփեցի. Պատմագրություն» գիրքը, որն իր մեջ ներառում է հեղինակի ինչպես «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկը, այնպես և «Վասն միաբանութեան հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան», «Ցաղագս Էջմիածնի օրհնութեանն և ձեռնադրութեանն», «Վասն աքսորման տէր Կիրակոս կաթուղիկոսին» գործերը: Թովմա Մեծոփեցու գլխավոր երկը մեզ է հասել մի քանի ընդօրինակութիւններով, սակայն առկա 21 ձեռագրերի համեմատությունը էական փոփոխություններ մտցնելու հնարավորություն է տալիս Կ. Ծահնազարյանի 1860 թ. Փարիզում հրատարակած բնագրում: Ահա թե ինչու տասնամյակներ շարունակ անհրաժեշտություն էր զգացվում ունենալ Թովմա Մեծոփեցու այդ և մյուս գործերի գիտական հրատարակությունը: Լ. Խաչիկյանի աշխատասիրությամբ լույս ընծայված գրքով սպառիչ պատասխան է տրվում բանասեր-պատմաբանների բազմաթիվ հարցերին. երբ և որտեղ է ապրել ու ստեղծագործել Թովմա Մեծոփեցին, ինչ աղբյուրներ է օգտագործել, բնագրային ինչ փոփոխություններ են կրել Թովմա Մեծոփեցու երկերը, ինչպես պետք է մեկնաբանել հեղինակի այս կամ այն հատվածը:

«Թովմա Մեծոփեցի» գիրքը հայ բնագրագիտության վերջին տարիների նվաճումներից է, և դա գիտական շրջանառության մեջ դնելը շնորհակալ գործ է, որովհետև Թովմա Մեծոփեցու և նրա երկերի գրքին կցված առաջաբանում ըստ ամենայնի Թովմա Մեծոփեցին բնութագրվում է իբրև պատմագիր, կրթական ու եկեղեցական գործիչ, իմաստասեր: 21 ձեռագրերի հիման վրա մեկ առ մեկ բացահայտվում են և քննականորեն հրատակակվում այն երկերը, որոնք պատկանել են նրա գրչին: